



«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՍՈՒԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Քաջարան, 3309, Լեռնագործների 18, հեռ. (+374 285) 3 31 31, էլ. փոստի հասցե՝ info@zcmc.am

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՍՈՒԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Քաջարան, 3309, Լեռնագործների 18,

Հեռ. (+374 285) 3 31 31,

Էլ. փոստի հասցե՝ info@zcmc.am

Հաշվետվություն թիվ 28, 23.03.2022թ.

1) 2022 թվականի մարտի 11-ին տեղի է ունեցել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն կամ ԶՊՄԿ) խորհրդի նիստ, որի ընթացքում որոշում է կայացվել հետևյալ անձանց Ընկերության խորհրդի անդամների թեկնածուների ցուցակում ընդգրկելու մասին՝

- Ռոման Վիկտորի Տրոցենկո
- Ռոման Նիկոլայի Խուդոլի
- Անատոլի Վիկտորի Գոգոտին
- Իննա Գրիգորիի Սլիվինսկայա
- Արտյոմ Պետրոսյան
- Պասկալ Ջ. Ֆեյդո

Խորհրդի կողմից որոշում է կայացվել նաև 2022 թվականի մարտի 16-ին գումարել «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգով՝

- ա) Ընկերության խորհրդի ընտրվող անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցում,
- բ) Ընկերության խորհրդի անդամների ընտրություն:

2) 2022 թվականի մարտի 16-ին տեղի է ունեցել «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով, որի ընթացքում կայացվել են հետևյալ որոշումները.

ա) դադարեցնել Ընկերության խորհրդի հետևյալ անդամների լիազորությունները՝

- Թոմաս Հայլ
- Նարեկ Ամբարյան
- Պարագ Յոհաննես Բհատ
- Մորից Հիլլ

բ) Ընկերության խորհրդի անդամներ ընտրել հետևյալ անձանց՝

- Ռոման Վիկտորի Տրոցենկո
- Ռոման Նիկոլայի Խուդոլի
- Անատոլի Վիկտորի Գոգոտին
- Իննա Գրիգորիի Սլիվինսկայա
- Արտյոմ Պետրոսյան

գ) սահմանել, որ Ընկերության խորհրդի գործող ընտրվող անդամների լիազորությունները դադարեցնելու և Ընկերության խորհրդի նոր անդամներ ընտրելու մասին որոշումներն ուժի մեջ են մտնում 2022 թվականի ապրիլի 18-ից: